

Քեթևան Գոչիտաշվիլի

Իվանե Ջավախիշվիլիի անվան
Թբիլիսիի պետական համալսարան

Կախա Գարունիա

Քաղաքացիական ինտեգրման և
ազգամիջյան փոխհարաբերությունների կենտրոն

ԼԵԶՎԱԿԱՆ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԸ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Երկրորդ/օտար լեզուների ուսուցման ժամանակակից մեթոդների և մոտեցումների համաձայն, լեզվի ուսուցման գլխավոր նպատակն է, որ սովորողը զինված լինի համապատասխան գիտելիքով և բոլոր այն կարողություններով, որոնք օժանդակում են նրան՝ հաղորդակցական կարողությունների հաջող իրականացման հարցում: Լեզվի և մշակույթի միջև առկա դիալեկտիկական կապի նախատեսմամբ, ոչ մայրենի լեզվի ուսուցումը միայն քերականական ձևերի և շարահյուսական կառույցների, արհեստական, հատուկ ուսումնական նպատակների համար ստեղծած տեքստերի առաջարկմամբ, չի կարող բավարարել լեզվի ուսուցման նկատմամբ առաջադրված պահանջները, քանի որ սովորողը, որպես օրենք, անպատրաստ է իրական հաղորդակցական միջավայրում հարմարվելու և համապատասխան հաղորդակցական գործունեության համար: Այլ բազմաթիվ հանգամանքների հետ մետեղ վերոնշյալ անհաջողության գլխավոր պատճառներից մեկը կարող է անվանվել նպատակային լեզվի (նաև մշակույթի) կարևորագույն բաղադրամասերի չիմացությունը: Հաղորդակցական գործողությունների մեջ առանձնահատուկ դեր է շնորհվում բառային հաղորդակցությանը և, բնականաբար, խոսքային վարվելակարգի (խոսողական գործողության կանոնակարգվող կանոններ, ազգային նշանով սահմանված կարծրատիպային համակարգ, խոսքում կիրառած դիմումի «կայուն բանաձևեր», որոնք ընդունված և ճանաչված են հասարակության կողմից) ուսանմանը:

Հոդվածում քննարկված են լեզվական վարվելակարգի իրացման տարբեր լեզվական մակարդակներ, որոնք պետք է նախատեսվեն վրացերենի, որպես երկրորդ/օտար լեզվի, ուսանման ժամանակ:

Լեզվական վարվելակարգի պահանջների, կանոնների, նորմերի համակարգ, որը թելադրում է, թե ինչ ձևով պետք է լեզվական կապ հաստատենք ուրիշների հետ, ինչպես պետք է շարունակենք հաղորդակցությունը և ինչպես ավարտենք այս հաղորդակցությունը՝ տարբերվող իրավիճակներին և հաղորդակցական խնդիրներին համապատասխան:

Լեզվական վարվելակարգը մշակույթի ներսում առկա պահանջների, ձևի, բովանդակության և իրավիճակային համապատասխանությունների միասնականություն է: Այն շատ տարբեր է տարբեր երկրներում և մշակույթներում: Եթե լեզվական վարվելակարգը քննարկենք նեղ հասկացությամբ, նրանում, հիմնականում, միավորվում են այնպիսի բառեր և արտահայտություններ, որոնք մարդիկ կիրառում են ողջույնի,

մատուցման/դիմումի, ինդրանքի, պատվերի, ներողության, շնորհակալություն հայտնելու, կարեկցանքի արտահայտման ժամանակ:

Ինքնըստինքյան, մշակույթը այս կամ այն լեզվական կոլեկտիվի անդամներին թելադրում է, թե ինչն է թույլատրելի և ինչը՝ ոչ: Հայտնի է, որ որոշ մշակույթների համար ընդունելի է, որ մարդ իր դժբախտության, հիմնախնդիրների մասին բացահայտ խոսի, իսկ ոմանց համար դա կտրականապես ընդունելի չէ ... Կարճ ասած, այս կամ այն մշակույթը առաջարկում է խոսողներին, թե ինչը կարող է դառնալ զրույցի թեմա և ինչը՝ ոչ:

Իսկ ավելի լայն հասկացությամբ լեզվական վարվելակարգը ցանկացած հաջող հաղորդակցական ակտի բաղադրիչ մաս է և կապվում է լեզվական հարաբերության կանխադրույթների հետ, ինչը պայմանավորում է հաղորդակցության մասնակիցների հարաբերության հաջողություն: Տվյալ զեկուցման մեջ մենք ընդունում ենք լեզվական վարվելակարգի այս հասկացությունը:

Երկրորդ/օտար լեզվի ուսուցման ժամանակ լեզվական վարվելակարգի ուսուցումը նախատեսում է սոցիոմշակութային գիտելիքի և **այն գիտելիքի լեզվական (բառային) իրականացման հնարավորությունների ուսուցում**, որն ուսումնասիրվելիք/նպատակային մշակույթին է բնորոշ և, հնարավոր է, արմատապես տարբերվել սովորողի մայրենի մշակույթից:

Լեզվական վարվելակարգի ուսուցման ժամանակ երկրորդ/օտար լեզվի ուսուցիչները և դասընթացը կազմողները պետք է նախատեսեն, որ այս համակարգի իրացումը տարբեր լեզվական մակարդակների վրա է տեղի ունենում, և լեզվի բոլոր այս տարրերի հաղորդակցական գործառնությունը կիրառելը լիարժեք չի լինի, եթե ուսումնասիրողը մանրամասնորեն չիմանա նրանցից յուրաքանչյուրի իրացման պայմանները և իրատեսական ասպեկտները:

1. ԲԱՌԱՊԱՇԱՐԱՅԻՆ-ԴԱՐՁՎԱԾՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ

Բառապաշարային-դարձվածքային մակարդակում սովորողին պետք է առաջարկենք հատուկ բառեր և արտահայտություններ, որոնք նրանց անհրաժեշտ կլինեն ամենօրյա, ոչ պաշտոնական խոսքում, նաև տարբեր հաղորդակցական խնդիրներում (գործնական, պաշտոնական, ակադեմիական):

Այսպիսիք են.

ա. Ողջույնը.

*գամարջրոձ / գամարջրոձօտ
ճօղա (ճաղամո) մժջօճօճօճօ
ճաղամօ
մօջեճաճմեճօ*

Սովորողին ողջույնի բոլոր այս ձևերը լեզվի ուսնման հենց առաջին ասիճանում պետք է տանք և բացատրենք, որ վրացերենում այս ձևերը տարբեր հաղորդակցական իրավիճակներում են կիրառվում. օրինակ՝ ոչ պաշտոնական ողջույնի ժամանակ, անգլերենի *ձօ* կամ ռուսերեն *պրիվետ* բառույթների նման, *գամարջրոձ* կամ *ճաղամօ* է ասվում: Ոչ պաշտոնական ողջույնի ժամանակ, բնականաբար բացառվում են *գամարջրոձօտ*, *մօջեճաճմեճօ* ձևերը ... Այս տեսակետից չեզոք է *ճօղա (ճաղամո)* մժջօճօճօճօ ձևը, չնայած, միևնույն է պակաս սպասելի է այսպիսի դիմումն ընկերոջը կամ հասակակցին, թեպետ, պետք է նախատեսել խոսակցի տարիքային և սոցիալական վիճակը, որոշակի դեր է կատարում նաև (քաղաքի բնակիչ, տարածաշրջան) պատկանելությունը:

բ. Որպիսությունը հարցնել.

ժօջօր ճար?
ժօջօր ճարտ/ձրձանճեճօտ?
ժօջօր ճօյօտեօտ?

Ի տարբերություն անգլերենի, վրացերենում պատահական ծանոթները (հաղիպողները), միմյանց չեն հարցնում *ժօջօր ճար/ձրձանճեճօտ?*

գ. Շնորհավորանք

ցողոցաց/ցողոցացո (ծննդյան օրը, Նոր տարին, Քրիստոսի ծնունդը ...)

Այս դեպքում ևս տարբերվում է ռեգիստրը («Հարգալից հոգնակին» չի կիրառվում հասակակիցների թե ընտանիքի անդամների հետ հաղորդակցվելիս), ուշագրավ է ուղղափառ քրիստոնյաների գլխավոր տոնին՝ Զատիկին, բնորոշ յուրահատուկ դիմելաձևը. *յրօնց օղջօ! հմնտ.՝ անգլերեն Happy eastern* (երջանիկ հարություն), թեպետ դա հեշտությամբ է ընկալում կրոնական մոտ մշակույթի ներկայացուցիչը (օրինակ՝ ռուսը, հմնտ.՝ *Христос воскрес!*):

դ. Հրաժեշտ

*Նախամղոն
միջցողոցո!*
յարջօդ Երժանցեբօլջօ

Նախամղոն! – հրաժեշտի այս ձևն ասենից հաճախ է կիրառվում, և այն ենթադրում է, որ ապագա հանդիպումը շուտ կկայանա:

յարջօդ Երժանցեբօլջօ! – այս արտահայտությունն առանձնապես հարգալից անձի նկատմամբ է կիրառվում:

յարջօդ օյօջօ! (յարջօդ օյօ-ջօտ!) – իսկ այս ձևը մերձավորների, հասակակիցների միջև է կիրառվում:

միջցողոցօ! – հրաժեշտի ժամանակ այս ձևն այն ժամանակ է կիրառվում, երբ հանդիպումը հետաձգվում է երկար ժամանակով կամ մշտապես:

մօմօջօլ Մեխցեղրօմլջօ! – հրաժեշտի հարգալից ձև է և ենթադրում է մոտ հանդիպման հույս: *միջցողոցօ Երժանցեբօլջօ!* – սա նույնն է, ինչ *յարջօդ Երժանցեբօլջօ*, սակայն բաժանումն ավելի է ընդգծված, սրված:

լօմլջ միջցողոցօն! *միջցողոցօն ևօմլջ ցօնջրցեբօ!* – հրաժեշտի պաշտոնական ձևեր են: Մերձավորներին և մեզ մոտ անձանց, որպես օրենք, մաղթում ենք՝ *ժօլլօ Նեբօնօ!*

Հրաժեշտի բանաձևերի դեպքում բավականին հստակ են տարբերված լեզվական ռեգիստրները: Չի կարելի մերձավոր մարդուն կամ ընտանիքի անդամին ասել *յարջօդ Երժանցեբօլջօ*, քանի որ դա բավականին հեզնական երանգ է ձեռք բերում, իսկ հաճախ անհաջող հաղորդակցական գործողության կամ բախման ավարտին է օգտագործվում (բացասական երանգ է կրում): Լեզվի ուսուցման գործընթացում ցանկալի է, անհրաժեշտության դեպքում, բացատրել որոշակի դարձվածքային արտահայտությունների կամ բառերի ծագումնաբանությունը, ինչը սովորողի ճանաչողական բազայում հստակ տեղ է զբաղեցնում: Օրինակ, ողջույնի ձևի (*յօմօրջօլ*) ուսուցման ժամանակ, ուսանման լեզուն կրողների մշակույթի ընկալման համար վատ չէր լինի անցկացնել «պատմական էքսկուրս»՝ կապված *յօմօրջօլ*-ի և *միջցողոցօ*-ի հետ (միշտ գավթիչների դեմ պայքարի մեջ գտնվող փոքրիկ երկրի հավերժական դժվարություն, ինչն արտացոլված է լեզվում ...):

ե. Ներողություն խնդրել

*Երօլլօ
Երօլլօն ցօնլլօ
լլօլլօ Երօլլօ
մօմօլլօլլ
մօմօլլլլլլ
լլլլլլլլլլլ*

Այս արտահայտությունների բաշխումը տարբեր է տարբեր հաղորդակցական իրավիճակներում: Հասակակցի հետ ավելորդ հարգալից ձևերի օգտագործումն ընդունված չէ (խոսակիցը սահմանափակվում է պարզ *Երօլլօ*-ի կիրառությամբ, կխուսափի *լլօլլօ Երօլլօ*-ի կամ *Երօլլօն ցօնլլօ*-ի ընտրությունից ... Ոչ պաշտոնական միջավայրում նույնպես ընդունված չէ *լլլլլլլլլլլ* կամ *մօմօլլլլլլ*-ի կիրառումը:

գ. Դիմելու ձևեր

Վրացերենում, ի տարբերություն եվրոպական լեզուների, չեն ընդունված *քրոջեսորո!*, *քյոմո!* և այլն, դիմումի ձևերը: Լեզու սովորողին պետք է բացատրենք, որ բոլոր այսպիսի դեպքերում *ձաճոնո ...* կամ *ձալձաճոնո ...* պետք է կիրառենք:

Բացի այդ, վրացերենում ընդունված է ավագ մարդու, պաշտոնով բարձր գտնվող անձի կամ նոր ծանոթացած մարդուն միայն անունով դիմել: Վրաց մշակութային տարածքում չի կիրառվում և «վատ տոն» է համարվում ազգանվամբ դիմելը ...

Հատուկ ուշադրություն պետք է դարձվի դիմումի ձևերի հետ ածական անունների ընտրությանը: Օրինակ, բացարձակապես անթույլատրելի է պաշտոնական անձին դիմել *Նաջեարեლო* կամ *հեմո...* (*Ռեքեթորո*, *Մինիստրո* և այլն) ձևերով, և ընդհակառակը, լեզվական արգելքը գործում է նաև մերձավոր անձանց դիմելիս, գոյություն չունի արտահայտություն. *Լրմաձ Բաճիցեցեմլո Եբոյա Ն Բաճիցեցեմլո Եծոյա* (լեզու սովորողին պետք է առաջարկենք համապատասխան միավորներ, օրինակ՝ *ձյորջանո*, *Նաջեարեლო...*).

է. Մերժում

Մերժումը հաղորդակցության գործընթացի մասնակիցներից պահանջում է առանձնահատուկ տակտ և դիտողականություն: Եվրոպական լեզուների նման, վրացերենում ևս ունենք մերժում արտահայտող տարբեր միջոցներ: Սովորողին պետք է բացատրենք, որ կտրականության աստիճանի համաձայն, տարբերում են ժխտման ձևեր.

Արաջոտար Մեմտեջեջա Մո! – կտրուկ մերժում:

Ալձոտ, Ար Գամոջա – պակաս կտրուկ: *ՉՖՊեջար, Ռոմ Պարոն Եթմա ՄոՖՊեջ ՆամՖՊեջարոձ, Արա...*

2. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ

Ընդհանրապես, վրաց լեզվի ուսուցման ժամանակ շատ կարևոր է այսպես կոչված «հարգալից հոգնակիի» ուսուցումը: Պրակտիկայից հայտնի է, որ վրաց լեզու սովորողները, որոնց մայրենի լեզուներում չկա տվյալ քերականական կարգը, դժվարանում են այն սովորել:

Քերականական մակարդակում կարևոր հարցական նախադասության կիրառումը հրամայականի փոխարեն *Նոմ Վեր ՄոմանՖաջլոտ Րշեստաջե-լոն ՉՊեջան?* – Զեիք սովորեցնի Ռուսթավելիի փողոց ինչպես գնալ: *Մեջոձլոտ, Ռոմ ԲՊրո ՄոմաՖլոձոտ?* Կարո՞ղ եք, որ հաց փոխանցեք:

Այստեղ պետք է բացատրել, որ հարցական նախադասությունը – *Նոմ Ար ՕՅոտ, Ըձյե Րա Ըձյա?* – Զգիտե՞ք արդյոք այսօր ինչ օր է: Պահանջում է ոչ միայն պատասխան՝ *Յոցո – Գիտեմ*, այլև պետք է անվանենք այդ օրը (*ՆյոՄա-Եծոյա, Եբոյա...* Հինգշաբթի է, կիրակի է ...).

3. ՈՃԱԲԱՆԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ

Լեզվական վարվելակերպի ուսուցումը ոճաբանական մակարդակում առանձնահատուկ ջանք է պահանջում ուսուցիչներից և նվաճվում է լեզվի տիրապետման համեմատաբար բարձր աստիճանում: Այստեղ ենթադրվում է, թե ինչպես պետք է խոսողը խուսափի ուղղակիորեն տհաճ կամ ցնցում պատճառող բառեր և արտահայտություններ ասելուց և դրանք փոխարինի մեղմասացություններով՝ մեղմ արտահայտություններով: Լեզու սովորողին պետք է մատուցենք ճշգրիտ տեղեկություն, թե ինչն ընդունելի չէ այս մշակույթի համար, օրինակ՝ ինչ թեմաների մասին խոսելն է արգելված կանանց կամ երեխաների մոտ (սեռական թեմաներ, ծառայողական հարաբերություններ և այլն)... Օրինակ, եթե անգլալեզու մարդու

համար *Թա նեյնջալաշրաճ ցամոյսյորք-ծօտ!* հաճոյախոսությունը բացարձակապես ընդունելի է, և ավելին, հասցեատերը այսպիսի հաճոյախոսություն-գնահատումը հաճույքով է ընդունում, բացարձակապես ոչ ընդունելի է նման բան ասելը կովկասյան մշակույթների (վրացական, ադրբեջանական, հայկական) ներկայացուցիչներին ...

Հետաքրքիր հերթագայություններ ունենք հաղորդակցության ժամանակ՝ բացասական տեղեկություն հաղորդելիս: Օրինակ, բնական իրավիճակում վրացի զրուցակիցը անպայման կխուսափի ասել՝ *ջեր ցաճարհեճա!* – Չի փրկվի: – այն անպայման կփոխարինի մեղմ արտահայտությամբ՝ *ձեզոմարեճա տօտյոն շնշեջեճա... –Վիճակը համարյա անհույս է...*

Զգացմունք-ընկալման բայերի նկատմամբ ևս շատ հետաքրքիր վերաբերմունք է՝ հաղորդակցական գործողության ժամանակ խոսակիցն անպայման կխուսափի բացասական իմաստ արտահայտող ձևն ուղղակիորեն կիրառելուց „*մյ օն ար մոյցարս, մժլլե*“ – Ես նրան չեմ սիրում, ատում եմ: Այս արտահայտությունը կփոխարինի արտահայտություններով. *հեմտոյն մոշլլեճեճեճա ճաճմօնօն, ար մյեմմօտօյրեճա* – Ես նրան չեմ ընդունում, դուրս չի գալիս և այլն:

4. ՀՆՉԵՐԱՆԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ

Լեզվի տիրապետման բարձր մակարդակը պահանջում է տարբերել հնչերանգային մակարդակում ասվածի բովանդակությունը:

Տյ Թա եճեճա? – Այստեղ ինչ է կատարվում – Կարող է լինել իսկապես հետաքրքրություն արտահայտող կամ

արտահայտել շատ ագրեսիվ վերաբերմունք տեղի ունեցածի կամ ընթացիկ փաստի/իրադարձության նկատմամբ:

Մօլո հեմտան, Թո չաճա մօմօճանյ! – Արի ինձ մոտ, երկու հատ սուրճ բեր ինձ – հնչերանգով է տարբերվում, թե սա հարգալից ձև է, թե՛ պահանջ:

Որոշ դեպքերում լեզվական վարվելակարգն արտահայտված է նաև ուղղախոսության մակարդակում: Այս տեսակետից վրացերենն աչքի չի ընկնում օրինակների առատությամբ, թեպետ, սովորողներին պետք է բացատրենք, որ *ջենցալլե/ջենօճան* – *ջենօճալլե-ի* փոխարեն ընդունված չէ:

* * *

Լեզվական վարվելակարգի ուսուցման ժամանակ կարևոր է ուսուցման հաղորդակցական սկզբունքի կիրառումը: Վարվելակարգի «բանաձևերի», որպես ուսուցողական նյութ, մատուցմանը պետք է գերադասենք ուսանողների համար հաղորդակցական խնդիրներ ստեղծելը, որոնցում նրանց կտանք այս բանաձևերի ընտրության հնարավորություն: Առաջադրանքներում պետք է արտացոլվի սոցիալական, համատեքստային և իրավիճակային պատկերը, այսինքն՝ ուսանողներին պետք է պատրաստենք նրան, որ ընտրեն, թե ինչ, որտեղ, ինչպես, ինչու պետք է ասեն և լեզվական ցանկից անեն ճիշտ ընտրություն:

Որոշ դեպքերում ուսանողների մայրենի և սովորած լեզուների վարվելակարգերի համեմատությունը կարող է սովորողին առաջընթաց բերել: Առանձնապես արդյունավետ է վավերական նյութի կիրառումը, ինչը ուսուցման գործընթացն առավելագույնս մոտեցնում է բնական, իրական հաղորդակցության պայմաններին:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

Իլլիկո, 2010 - Ildiko Csajbok-twerefou –language etiquette and culture in teaching of foreign languages, 2010

Անգլերը, որպես ..., 2011 - Teaching English as a Foreign Language, http://www.ehow.com/how_2170747_prepare-teach-english-abroad.html

Սախմեդո, I, 2006 – Դասագիրք ոչ վրացալեզու աշակերտների համար, «Սախմեդո», 2006:

Շավթվալաձե, 2006 – Ն.Շավթվալաձե, Բիլիկի, Վրաց լեզուն անգլալեզուների համար, գիրք I, հրատարակչություն «Լեգա», Թբիլիսի, 2006 թ.:

Շարաշենիձե, 2010 – Ն.Շարաշենիձե, Միդամո (Իրավիճակներ և քերականություն հաղորդակցության համար), Թբիլիսի, 2010:

ABSTRACRT

Ketevan Gochitashvili

Ivane javakhishvili Tbilisi State University

Kakha Gabunia

CCIIR

The role of Language etiquette while Teaching Georgia as a Second Language

ABSTRACT

According to the newer methods and approaches of Second/Foreign Language, the main goal of the learning is to provide learners with the all necessary skills and knowledge that will help them to communicate successfully while in the target language culture. There is a dialectic connection between language and culture. That’s why teaching by just offering grammar rules and forms, syntactic structures and artificial texts is not enough to accomplish learning objectives. Learners, usually, are not prepared for the real communicative situations and are unable to overcome the adaptation process in the new language/cultural environment. There are some reasons for these communicative failure, but from our point of view, the most important issue is the lack target language (culture) components.

Verbal communication is a essential part of communication. Naturally, language etiquette (regulated rules of communication, the system of national stereotypes expressed verbally, the “solid formulas” of addressing accepted by the society) teaching is a very important task for the language teachers.

In the paper we are discussing the different levels of language etiquette realization. While teaching Georgian as a second language we should take into consideration the components listed as follows:

- lexical-phraseological level _ special words and sayings, the forms of addressing as well, which are characteristic for Georgian Language.
- Grammatical level _ Georgian polite plural; Interrogative sentences substituting declarative in order to protect the polite tone etc.
- Stylistic level _ how to choose and use adequate euphemisms, words of rejection and etc.
- Intonational level _ the way of changing imperative and categorical tone using the proper intonation.
- Speech organizing level _ the samples of organizing of communication process, involvement, quitting, interrupting the speech and etc.

The paper contains the practical suggestions on which level of the language learning and for obtaining of which competences the components can be offered to the students.